ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՆՈՐԱՐԱԿԱՆ ՏՈՒՐԻԶՄԻ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ» (GIZ) ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԱՐՇԱՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՄԷ-ՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-82 673-22

«11» 11 2022թ.

ք. Երևան

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտա-կանությունները կատարող Արմինե Խառատյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն՝ Գ. Չարխչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Մարքեթինգային արշավների կազմակերպում և իրականացում ԱՄԷ-ում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 7,800,000 (յոթ միլիոն ութ հարյուր հազար դրամ) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները,

հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.1.1 Մատակարարի կողմից ստեղծվող և ՀՀ ԷՆ Զբոսաշրջության Կոմիտեին տրամադրվող նյութերը դառնում են ՀՀ ԷՆ ԶԿ սեփականությունը, որն ունի բացառիկ և անսահմանափակ իրավունքներ դրանց օգտագործման նկատմամբ ցանկացած համատեքստում և ցանկացած միջոցով (օնլայն, օֆլայն): Մարքեթինգային արշավի նյութերը չպետք է հրապարակվեն կամ օգտագործվեն՝ առանց ՀՀ զբոսաշրջության կոմիտեի գրավոր թույլտվության: Մատակարարը չպետք է օգտագործի հոլովակներըմարքեթինգային արշավի նյութերը սեփական գովազդի համար՝ առանց ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի գրավոր թույլտվության:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին

ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մ. Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի փող., 31շ., բն. 146
Հ/հ՝ 900000910423	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/հ 163001340393
ՀՎՀՀ՝ 02698604	ՀՎՀՀ 00508863
_____Ա. Խառատյան	_____Գ. Չարխչյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 11 » 11 2022 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-82/673-11 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	63511300	Մարքեթինգային արշավների կազմակերպում և իրականացում ԱՄԷ-ում ծառայություններ (ամբողջական տեխնիկական բնութագիրը հավելված 1.1)	դրամ	7,800,000	1	Մ. Մկրտչյան 5 722 սենյակ	Մինչև 2022թ. դեկտեմբերի 15-ը

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/հ՝ 900000910423
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02698604

----------Ա. Խառատյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի փող., 31շ., բն. 146
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/հ 163001340393
ՀՎՀՀ 00508863

---------- Գ. Զարխչյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1

« 11 » 11 2022 թ. կնքված

ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-82 673.22 ծածկագրով պայմանագրի

Թվով երկու մարքեթինգային արշավների կազմակերպում և իրականացում ԱՄԷ-ում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի պատվերի հիման վրա և հաստատումով:

Մարքեթինգային թվով երկու արշավների իրականացում

- **Մարքեթինգային թվով երկու արշավները պետք է իրականացվի ԱՄԷ-ում**
- **Յուրաքանչյուր մարքեթինգային արշավի տևողությունը երկու շաբաթ է: Յուրաքանչյուր մարքեթինգային արշավ ընդգրկող ամեն շաբաթ ներկայացվում է նոր դիզայնով. արդյունքում՝ յուրաքանչյուր մարքեթինգային արշավ ներառում է երկու դիզայներական և կոնցեպտուալ լուծում՝ հիմնված ՀՀ ԷՆ ԶԿ կողմից տրամադրվող ամփոփագրի՝ բրիֆի հիման վրա և համաձայնեցվում նախապես ՀՀ ԷՆ ԶԿ հետ:**

Նախատեսվող Մարքեթինգային արշավների մանրամասն նկարագիր

Արշավների նախատեսվող գրաֆիկ և թեմաներ

[redacted]	Հոկտեմբեր/Նոյեմբեր		Նոյեմբեր	
	Արշավ 1		Արշավ 2	
	Բնություն	Արկածներ	Գաստրոնոմիա	Մշակույթ
	Հոկ 31 - Նոյ 6	Նոյ 7 - Նոյ 13	Նոյ 14 - Նոյ 20	Նոյ 21 - Նոյ 27
ԱՄԷ	V	V	V	V

Կատարողը /մատակարարը/ ամբողջությամբ պետք է կազմակերպի և վարի մարքեթինգային գործունեությունը հիմնական թիրախային խմբերի (ԱՄԷ) իրազեկվածության բարձրացման համար՝ հիմնվելով մշակված մարքեթինգային արշավի վրա:

Կարևոր նշում. **Արշավների թեմաները, ինչպես նաև սույն փաստաթղթում նախատեսված արշավների ժամանակացույցը կարող են փոփոխվել ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի կողմից՝ ըստ անհրաժեշտության:**

Մարքեթինգային արշավների պահանջներ

Ինտեգրված հաղորդակցման արշավը պետք է ներառի՝

- **Վիզուալ բովանդակության դիզայն և ադապտացիա ըստ թվային պլատֆորմների առանձնահատկությունների : Յուրաքաչյուր արշավի համար դիզայն կոնցեպտները ամեն շաբաթ պետք է թարմացվեն:**

Սոցիալական մեդիա հարթակներ.

- **ԱՄԷ – Facebook, Instagram, YouTube**

***ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ.** Սոցիալական մեդիա հարթակներում մարքեթինգային արշավը/ գովազդը/ պետք է ներառի հրապարակումներ, պատմություններ, ռիլեր, (post, story, reel) կարուսելներ և հոլովակներ

Արդյունավետության հիմնական ցուցանիշներ՝ KPIs

- Կրեատիվություն
- Թվային մարքեթինգի KPI-ներ. ներառյալ Reach/Հասանելիություն, Impression/Տեսանելիություն, էջի հավանումներ, Instagram-ի հետևորդներ, տեսանյութերի դիտումներ, գրառումների պահումներ, նյութերի տարածումներ, մեկնաբանություններ-ընդհանուր ներգրավվածություն, վեբ կայքի տրաֆիկ, էջերի դիտումներ, մեկ այցի տևողությունը/ session duration, գրառումների հաջողությունը և այլ ցուցանիշների և արդյունքների վերլուծություն
- Հատուկ տերմինների որոնումների քանակը, որոնք կօգտագործվեն արշավի խթանման ընթացքում (բրենդային որոնումներ)

Մինիմալ պահանջներ

ԱՄԷ

ԱՄԷ-ի շուկայի համար անցկացվող յուրաքանչյուր ամսվա ընթացքում իրականացված արշավները պետք է ունենան հետևյալ մինիմալ արդյունքները

- Տեսանելիություն *սոցիալական հարթակներում* (Facebook, Instagram) (Impression – all ads including posts and videos) – 1.000.000

  Հասանելիություն (Reach) – 350.000
- *Հոլովակների դիտում* (YouTube) – 200.000

  Հասանելիություն- 70.000

4.3 Աշխատանքների շրջանակ

- Մարքեթինգային արշավի օնլայն իրականացում բոլոր թիրախային շուկաներում՝ ըստ ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի կողմից ներկայացվող բրիֆի պահանջների, նպատակների և գնահատման հիմնական ցուցանիշների
- Աշխատանքային պլանի ներկայացում
- Նյութերի (լուսանկարներ և այլ) դիզայն և ադապտացիա տարբեր հարթակներում տեղադրելու համար:
- Արշավի շրջանակներում գովազդների տեղադրում և օպտիմիզացում տարբեր օնլայն հարթակներում, օնլայն գովազդների/հրապարակումների տեղադրում, բուսթ (boost) և վերաթիրախավորում (retargeting)
- Այլ օնլայն մարքեթինգային քայլերի իրականացում՝ ըստ անհրաժեշտության
- Պահանջվող ծառայությունների իրականացման համար տարբեր այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ համագործակցության կազմակերպում և ապահովում ՝ ըստ անհրաժեշտության
- Իրականացվող արշավների ընթացքում պարբերական հաշվետվությունների ներկայացում գրանցվող արդյունքների վերաբերյալ (շաբաթական)
- Իրականացվող արշավների վերջում ամփոփիչ հաշվետվության ներկայացում (յուրաքանչյուր արշավի ավարտին, ընդհանուր 1 նման հաշվետվություն)
- Օնլայն (մարքեթինգային արշավներ) մարքեթինգային արշավների իրականացման համար անհրաժեշտ թիմի ապահովում՝ ներառյալ
  - Թվային մարքեթինգի մասնագետ
  - PR մասնագետ
  - Գրաֆիկ դիզայնի մասնագետ
  - Հաղորդակցման մասնագետ (կոնտենտ գրող/ սոցիալական մեդիա մարքեթինգի (smm) մասնագետ)

- Թարգմանիչներ և/կամ թիրախային երկրների լեզուներին գերազանց տիրապետող հաղորդակցման մասնագետներ՝ ներառյալ անգլերեն, ֆրանսերեն,
- Այլ գծով մասնագետ՝ ըստ ներկայացվող հայեցակարգի պահանջի

*Մատակարարը կարող է առաջարկել թիմում մասնագետների այլ տարբերակ, միաժամանակ ապահովելով վերոնշյալ աշխատանքների լիարժեք կատարումը և համաձայնեցնելով այն ՀՀ ԷՆ ԶԿ հետ

Կարևոր տեղեկատվություն

- Օնլայն արշավները իրականացվելու է ԱՄԷ-ում: Ընտրված կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան փորձ և հնարավորություն նշված շուկաներում օնլայն մարքեթինգային արշավների իրականացման համար:
- Օնլայն արշավները ներառելու և իրականացվելու են YouTube, Facebook, Instagram, օնլայն հարթակներում՝ կախված թիրախային շուկայից և մարքեթինգային արշավի կոնցեպտից և համաձայնեցված ՀՀ ԷՆ ԶԿ հետ:
- Յուրաքանչյուր արշավի մարքեթինգային բրիֆը, ակնկալվող արդյունքները, ժամկետները և այլ կարևոր պահանջները կներկայացվեն ՀՀ ԷՆ ԶԿ կողմից:
- Մարքեթինգային արշավների համար նշված ցուցանիշները (դիտումների քանակ) նախատեսված է ընդհանուր ամսվա և ուղղության համար, ոչ թե ամեն թեմայի:
- Թվով 2 մարքեթինգային արշավներից յուրաքանչյուրը 2 շաբաթ տևողությամբ է՝ յուրաքանչյուր շաբաթվա համար նյութերի / հրապարակումների փոփոխությամբ և նոր լուծումներով: Յուրաքանչյուր շաբաթվա արշավից հետո (շաբաթական 1 անգամ) մատակարարը պետք է ՀՀ ԷՆ ԶԿ ներկայացնի *ընթացիկ հաշվետվություն* արդյունքների վերաբերյալ, որի հիման վրա կձևավորվի հաջորդ շաբաթվա նյութերի կոնցեպտը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մ. Մկրտչյան 5	Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի փող., 31շ., բն. 146
Հ/հ՝ 900000910423	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/հ 163001340393
ՀՎՀՀ՝ 02698604	ՀՎՀՀ 00508863
----------Ա. Խառատյան	----------Գ. Զարխչյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
« 11 » 01 2022թ. կնքված
673-22 N ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-82
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության																	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը		դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
		Տնտեսագիտական դասակարգում	տեխնիկական բնութագիրը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը ՀՀ դրամ	
1	63511300	4239	**Մարքեթինգայի ն արշավների կազմակերպում և իրականացում ԱՄԷ-ում**	-	-	-	-	-	-	-	-	-	-	7,800,000	7,800,000	7,800,000	

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/հ՝ 900000910423
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02698604

_____**Ա. Խառատյան**
/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՍ ԹԻՄ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի փող., 31շ., բն. 146
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/հ 163001340393
ՀՎՀՀ 00508863

_____**Գ. Չարխչյան**
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 11 » 11 2022թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-82 ծածկագրով պայմանագրի
673-22

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 11 » 11 2022 թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-82 673·22 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն